Հայրենադարձված ռազմագերիների իրավունքների պաշտպանությանն ուղղված առաջարկներ

- Օրենքով սահմանել «Նախկին ռազմագերի» հասկացությունը, ինչպես նաև նախկին ռազմագերիների կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները:

- Օրենքով սահմանել անվճար և որակյալ բժշկական օգնություն ստանալու իրավունք ողջ կյանքի համար՝ անկախ այն հանգամանքից, նախկին ռազմագերին հանդիսացե՞լ է զինծառայող, թե ոչ, եղել է պայմանագրային, թե պարտադիր ժամկետային զինծառայող:

- Օրենքով ամրագրել, որ գերությունից վերադառնալուց հետո զինծառայողները պետք է պարտադիր անցնեն առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն:

- Նախկին ռազմագերիների առողջական վիճակի հետազոտությունը և բժշկական փորձաքննությունը Ստամբուլյան արձանագրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան իրականացնելու նպատակով ընդունել անհրաժեշտ իրավական ակտեր կամ փոփոխություններ և լրացումներ կատարել արդեն իսկ գործող իրավական ակտերում:

- Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել, որպեսզի ստացած վնասվածքի կամ հիվանդության պատճառական կապը որոշելիս հնարավոր լինի նշել, որ այն ստացվել է գերության ընթացքում:

- Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել, որ զինապարտների (այդ թվում՝ նախկին ռազմագերիների) առողջական վիճակի վերաբերյալ տրվող եզրակացություններում հաշվի առնվեն դատաբժշկական և դատառազմաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները:

- Նախկին ռազմագերիների առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննությունները Ստամբուլյան արձանագրությամբ

ՀՀ, 2002, ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ; Հեռ.՝ +374 (322) 2 13 40; (55) 82 06 32; Էլ. փոստ՝ mailbox@peacedialogue.am; URL: http://www.peacedialogue.am; www.safesoldiers.am

սահմանված չափանիշների համապատասխան իրականացնելու համար կազմակերպել համապատասխան մասնագետների վերապատրաստումներ:

- Իրավական ակտերով ամրագրել այն սահմանափակումները, որոնք գործելու են նախկին ռազմագերիներին կրկին զինվորական ծառայության ընդգրկելու դեպքում (այդ թվում՝ մարտական հերթապահության մեջ և ռազմական գործողություններում ընդգրկելու արգելքը):

- Օրենքով սահմանել, որ նախկին ռազմագերիները վարժական հավաքների ընթացքում չեն կարող ընդգրկվել մարտական հերթապահության:

- Օրենքով ամրագրել, որ նախկին ռազմագերիները Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո պարտավոր են սեղմ ժամկետներում իրավասու մարմիններին մանրամասն տեղեկություններ տրամադրել գերության ընթացքում գերեվարող պետության ներկայացուցիչներին հայտնած տեղեկությունների, ինչպես նաև առկա պայմանավորվածությունների (այդ թվում՝ համագործակցության) մասին: Սահմանել, որ գերության ընթացքում գերեվարող պետության ներկայացուցիչներին ցանկացած բնույթի տեղեկություններ հայտնելու համար (այդ թվում՝ պետական, ծառայողական կամ ռազմական գաղտնիք) նախկին ռազմագերիներն ազատվում են քրեական պատասխանատվությունից, եթե այդ մասին սեղմ ժամկետներում հայտնում են ՀՀ իրավապահ մարմինների ներկայացուցիչներին՝ վերադառնալուց անմիջապես հետո, և եթե դրա արդյունքում ՀՀ-ն չի ունեցել մարդկային և/կամ տարածքային կորուստներ: